

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԷՐԻԿ ՄԱՅԻՍԻ

**«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ»**

Ը.00.03՝ «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Արմեն Աշմատի Հակոբյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Հայկ Գերասիմի Մնացականյան
տնտեսագիտության թեկնածու
Հայկ Իլլիչի Բեջանյան


Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2022 թվականի հուլիսի 7-ին, ժամը 14:00-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության 014 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Մ. Նալբանդյան փ., 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022 թվականի մայիսի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  Տ. Ս. Մարտիրոսյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ապենախոսության թեմայի արդիականությունը: Վարքագծային ֆինանսները, դարեր շարունակ դրսևորվելով պրակտիկայում և տեղ գտնելով տարբեր հեղինակների աշխատություններում, ֆինանսների առանձին ուղղություն է դարձել և գիտական բնույթ ստացել միայն 20-րդ դարի վերջում: Եթե նախկինում կարող էր կասկածի տակ դրվել դրա գիտականությունը, ապա այժմ ոչ միայն գիտության բնագավառ է, այլև ֆինանսների մասնագիտական գրականության ամենաքննարկվող և արդիական առարկաներից: Վարքագծային ֆինանսները համեմատաբար նոր ուղղություն է, որն ընդունում է մարդու իռացիոնալությունը, շուկայի անկատարությունը և փորձում բացատրել նմանատիպ երևույթները, որով էլ տարբերվում է ավանդական ֆինանսներից: Վարքագծային ֆինանսների ուսումնասիրությունը գիտամեթոդական տեսանկյունից ավելի է կարևորվում հատկապես ընթացիկ ժամանակաշրջանում, երբ դրա զարգացմանը նպաստելու համար Նոբելյան մրցանակի են արժանացել մի շարք տնտեսագետներ և հոգեբաններ: Մյուս կողմից՝ ՀՀ տնտեսության զարգացման ներկա փուլում հատկապես կարևորվում է ներդրումների դերը: Դրանք բազմաթիվ դրսևորումներ ունեն և ներառում են ինչպես տնտեսության իրական հատվածը, ներքին և արտաքին տնտեսական գործունեությունը, այնպես էլ կապված են տնային տնտեսությունների, բնակչության եկամուտների, խնայողության և վարկավորման, սպառման վարքագծային տարբեր դրսևորումների հետ: Հաշվի առնելով այն փաստը, որ ՀՀ-ում բնակչության ֆինանսական վարքագծի ու ներդրումային որոշումների կայացման հիմնախնդիրները բավարար խորությամբ հետազոտված չեն՝ բազմակողմանի հետազոտություն իրականացնելու օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում ինչպես գիտամեթոդական, այնպես էլ գործնական մակարդակներում: Վերջինը կարող է նպաստել ՀՀ-ում ֆինանսական գրագիտության բարձրացմանը, ֆինանսական վարքագծի, առաջացող ռիսկերի և հնարավորությունների գնահատման և կառավարման բարելավմանը: Դրանց շնորհիվ բնակչությունը կարող է առավել արդյունավետ կառավարել իր ֆինանսական հոսքերը, ինչը, իր հերթին, կարող է ազդեցություն ունենալ ամբողջ տնտեսության վրա: Ի լրումն վերը նշված պատճառների՝ գիտական հետազոտությունների իրականացման հրատապությունը ընդգծվում է հատկապես ներկա ժամանակաշրջանում, երբ պարբերաբար ի հայտ են

գալիս այնպիսի անկանոնություններ կամ անհաղթահարելի ուժեր, ինչպիսիք են «COVID-19» համավարակը, 2020 թ. պատերազմը, ռուս-ուկրաինական պատերազմը, որոնք բնակչության շրջանում առաջացնելով սպասումներ (հիմնականում բացասական)՝ հաճախ տնային տնտեսություններին դրդում են հապճեպ կամ խուճապային ֆինանսական վարքագծի դրսևորման:

Արենախոսության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է հետազոտության միջոցով բացահայտել ՀՀ բնակչության ֆինանսական վարքագծի, ներդրումային որոշումների կայացման և դրանց հետ առնչվող հիմնախնդիրները, դրանց վրա ազդող գործոնների միջև կապերի, օրինաչափությունների ու դրսևորումների գնահատման հիման վրա մշակել և առաջարկել ֆինանսական վարքագծի բարելավման ուղիների գիտականորեն հիմնավորված մոտեցումներ: Նշված նպատակին հասնելու համար առաջադրվել են մի շարք խնդիրներ.

- բացահայտել վարքագծային ֆինանսների էությունը, կապն ավանդական ֆինանսների հետ,
- հավաքագրել, մշակել և ամփոփել բնակչության ֆինանսական վարքագծի և ներդրումային որոշումների կայացման վերաբերյալ վիճակագրական ցուցանիշներ և այլ տվյալներ,
- վիճակագրական ցուցանիշների և մոդելների օգնությամբ գնահատել ավանդների ներդրման վարքագիծը որոշող սոցիալ-տնտեսական և շուկայական գործոնների ազդեցությունը,
- վիճակագրական ցուցանիշների և մոդելների օգնությամբ գնահատել վարկավորման վարքագիծը որոշող սոցիալ-տնտեսական և շուկայական գործոնների ազդեցությունը,
- գնահատել ֆինանսական վարքագիծը որոշող վարքագծային գործոնների ազդեցությունը,
- բացահայտել բնակչության ֆինանսական վարքագծին առնչվող առկա հիմնախնդիրները, հետազոտության հիման վրա մշակել ֆինանսական վարքագծի բարելավման ուղիների մոտեցումներ:

Ուսումնասիրության առարկան և օբյեկտը: Ուսումնասիրության առարկան ՀՀ բնակչության ֆինանսական վարքագծի հիմնախնդիրներն են՝ պայմանավորված

Ֆինանսական և ներդրումային որոշումների կայացման վրա ազդող գործոններով ու ֆինանսական վարքագծի բարելավման անհրաժեշտությամբ: Ուսումնասիրության օբյեկտը ՀՀ բնակչությունն է կամ ՀՀ ռեզիդենտ տնային տնտեսությունները և նրանց ֆինանսական վարքագիծը:

Ատենախոսության տեսամեթոդական հիմքերը և տեղեկատվական ապահովումը: Հետազոտությունն իրականացվել է վարքագծային ֆինանսների վերաբերյալ մասնագիտական, հատկապես ժամանակակից արտասահմանյան գրականության ուսումնասիրության հիման վրա: Ատենախոսությունում ներկայացված է տեղեկատվություն ֆինանսների մասին հայկական և առավելապես արտասահմանյան գրականությունից, ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական հրապարակումներից, պաշտոնական հարցմանն ի պատասխան՝ էլ. փոստի միջոցով տրամադրված ցուցանիշներից, ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջից, հայկական և արտասահմանյան էլեկտրոնային հրապարակումներից և զեկույցներից, ՀՀ բնակչության շրջանում իրականացված հարցմամբ հավաքագրված տվյալներից:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը: Ատենախոսության հիմնական գիտական արդյունքը ՀՀ բնակչության ֆինանսական վարքագծի հիմնախնդիրների վերաբերյալ նոր մոտեցումների մշակումն ու ներկայացումն է, որոնցից գիտական նորույթ են հետևյալները.

- ավանդային ներդրումների վարքագծի վերլուծությամբ հստակեցվել և գնահատվել են ՀՀ տնային տնտեսությունների խնայողության վարքագծի և ավանդների վրա ազդող գործոնները, այդ թվում՝ միջին ամսական անվանական աշխատավարձ, սպառողական գների ինդեքս, պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվ, ԱՄՆ դոլարի փոխարժեք, շուկայական տոկոսադրույք, ցույց է տրվել դրանց միջև կապի ուղղությունն ու բնույթը,
- վարկավորման վարքագծի վերլուծությամբ հստակեցվել և գնահատվել են ՀՀ տնային տնտեսությունների վարկերի վրա ազդող սոցիալ-տնտեսական և շուկայական գործոնները, որոնք դիտարկվել են ավանդների դեպքում, ցույց է տրվել դրանց միջև կապի ուղղությունն ու բնույթը,

- գնահատվել են ՀՀ-ում ֆինանսական գրագիտության, ֆինանսական սթրեսի և ֆինանսական բավարարվածության ազդեցությունը ֆինանսական վարքագծի վրա, նշված գործոնների միջև կապի ուղղությունն ու բնույթը,
- հետազոտվել և հիմնավորվել են ՀՀ-ում բնակչության ֆինանսական վարքագծի և ներդրումային որոշումների կապը սոցիալ-տնտեսական տարբեր հիմնախնդիրների հետ, բացահայտվել կապի բնույթը, մշակվել և առաջադրվել են մոտեցումներ, որոնք կարող են նպաստել ներդրումային և ֆինանսական վարքագծի բարելավմանը սոցիալ-տնտեսական, գիտակրթական, ֆինանսական-ներդրումային ոլորտներում:

Ատենախոսության արդյունքների կիրառումը և գործնական նշանակությունը:

Ատենախոսությունում քննարկված տեսություններն ու մոտեցումները կարող են օգտակար լինել վարքագծային ֆինանսների դասավանդման ժամանակ և դրա վերաբերյալ հետազոտություններ իրականացնելիս: Վերլուծության շնորհիվ ստացված արդյունքները գործնականում օգտակար կարող են լինել բնակչությանը՝ սեփական ֆինանսական ռեսուրսներն առավել արդյունավետ օգտագործելու, դրամական միջոցների հոսքերն ավելի նպատակային կառավարելու համար, ֆինանսական ինստիտուտներին՝ հատկապես առավել արդյունավետ փաթեթային կառավարում իրականացնելու համար, ֆինանսական խորհրդատուներին, պետական տնտեսական քաղաքականություն մշակողներին՝ խուճապային վարքագծի դեպքում ճգնաժամից խուսափելու, ավելի ճիշտ ֆինանսական պլանավորում իրականացնելու նպատակով:

Հետազոտության փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում կազմակերպված ասպիրանտների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական նստաշրջաններում: Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակվել են գիտական 6 (վեց) հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից: Ատենախոսությունը շարադրված է 116 էջի վրա (առանց հավելվածի):

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել են ատենախոսության հրատապությունը և արդիականությունը, սահմանվել են նպատակն ու խնդիրները, ներկայացվել ուսումնասիրության առարկան և օբյեկտը, օգտագործված տեղեկատվության աղբյուրները, ստացված գիտական արդյունքներն ու դրանց գործնական կիրառությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Վարքագծային ֆինանսների էությունն ու տեսամեթոդական հիմքերը»** գլխում ուսումնասիրվել են վարքագծային ֆինանսների առաջացման ու դրա, որպես ֆինանսների առանձին ուղղության, զարգացման տեսամեթոդական հիմքերը: Նախ՝ ներկայացվել են վարքագծային ֆինանսների մասին հրատարակված առաջին աշխատանքներն ու արձանագրված անկանոնությունների (անոմալիաների) դեպքերը, անդրադարձ կատարվել մի շարք հեղինակների սահմանումների, որոնց հիման վրա առանձնացվել է վարքագծային ֆինանսների հետևյալ բնորոշումը. ֆինանսների նոր ուղղություն է, որը, հաշվի առնելով այլ հասարակական գիտությունների ձեռքբերումները, ունակ է բացատրելու առօրյա շուկայական անկանոնությունների և ներդրողների իռացիոնալ վարքագծի դրսևորման պատճառները՝ դարձնելով տեսությունն առավել մոտ իրականությանը: Այնուհետև՝ իրականացվել է վարքագծային ֆինանսների տեսության և ավանդական ֆինանսների տեսության համեմատական վերլուծություն, որի արդյունքում ընդգծվել է, որ վարքագծային ֆինանսները հաշվի է առնում ներդրողների իռացիոնալ լինելը, ինչպես նաև շուկաների անկատար լինելը, հետևաբար և անկանոնությունների ի հայտ գալը: Վերջինի շնորհիվ այն կարողանում է լրացնել բացը, որ գոյացել էր ֆինանսների ավանդական տեսությունների հիմքում ընկած ենթադրությունների պատճառով: Գիտնականների շրջանում վարքագծային ֆինանսների տեսության ու ավանդական ֆինանսների տեսության կողմնակիցների միջև առկա մրցակցությունը հանգեցրել է նրանցից որոշների՝ Նոբելյան մրցանակի արժանանալուն: Բացի համեմատական վերլուծությունից՝ քննարկվել են ներդրումային որոշումների կայացման վրա ազդող հոգեբանական գործոններն ու վարքագծային ֆինանսների արդի միտումները: Մասնավորապես ներկայացվել են մի շարք վարքագծային նախապաշարմունքներ (ռիսկից խուսափում, էվրիստիկ նախապաշարմունքներ, հակման էֆեկտ և այլն), որոնք

ուղեկցում են մարդկանց ողջ կյանքի ընթացքում, ինչի պատճառով և դարձել են վարքագծային ֆինանսների տեսության անքակտելի մասը: Չնայած նրան, որ վարքագծային ֆինանսները գիտական հիմք է ստացել 20-րդ դարի վերջին՝ դրա վերաբերյալ մասնագիտական գրականությունը հատկապես ավելի է հարստացել 21-րդ դարում, երբ տեսաբաններն ու հետազոտողները շարունակում են ուսումնասիրել ֆինանսական վարքագիծը գիտության տարբեր ոլորտների տեսանկյունից, այդ թվում՝ ֆինանսների, հոգեբանության, սոցիոլոգիայի և այլ հասարակական գիտությունների:

Ատենախոսության երկրորդ՝ **«ՀՀ ռեզիդենտ տնային տնտեսությունների ավանդների ներդրման ու վարկավորման վարքագծի վերլուծությունը»** գլխում բազմակողմանիորեն վերլուծվել են ՀՀ ռեզիդենտ տնային տնտեսությունների (ՌՏՏ) սպառողական ծախսերի, ներդրած ավանդների ու ստացած վարկերի կառուցվածքն ու շարժընթացը, բացահայտվել և գնահատվել են ՀՀ-ում բնակչության ավանդների ներդրման և վարկավորման վարքագծերի վրա սոցիալ-տնտեսական գործոնների՝ ՀՀ միջին ամսական անվանական աշխատավարձի (ՄԱԱ), սպառողական գների ինդեքսի (ՍԳԻ), պաշտոնապես գրանցված գործազուրկների թվի (ՊԳԳ), մանրածախ առևտրի շրջանառության (ՄԱՇ), շուկայական գործոնների՝ ԱՄՆ դոլարի փոխարժեքի, շուկայական տոկոսադրույքի, պետական միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերության, շրջանառությունում կանխիկ դրամի ազդեցությունը, ներկայացվել դրանց առնչվող հիմնախնդիրները:

2009-2020 թթ.-ի ամսական տվյալների ժամանակային շարքերի հիման վրա 2 ARDL (Autoregressive Distributed Lag) EC (Error Correction) տնտեսաչափական մոդելների օգնությամբ գնահատվել են վերը նշված սոցիալ-տնտեսական գործոնների ազդեցությունը ավանդների ներդրման և վարկավորման վարքագծերի վրա: ARDL մոդելի EC տարբերակն ունի հավասարում (1)-ում բերված տեսքը¹:

$$\Delta y_t = \alpha_0 + \sum_{i=1}^p \beta_i \Delta y_{t-i} + \sum_{i=1}^p \delta_i \Delta x_{t-i} + \sum_{i=1}^p \varepsilon_i \Delta z_{t-i} + \lambda_1 y_{t-1} + \lambda_2 x_{t-1} + \lambda_3 z_{t-1} + u_t \quad (1)$$

որտեղ՝ α_0 -ն հաստատուն պարամետր է,

¹ Shrestha, M. B., & Bhatta, G. R. (2018). Selecting Appropriate Methodological Framework for Time Series Data Analysis. The Journal of Finance and Data Science, 1-19. doi: 10.1016/j.jfds.2017.11.001:

$\Delta y_t = y_t - y_{t-1}$ կամ y_t կախյալ փոփոխականի առաջին տարբերությունն է,

x_t, z_t մոդելում ընդգրկված փոփոխականներ,

$\beta_i, \delta_i, \varepsilon_i$ գործակիցներ, որոնք բնութագրում են մոդելի կարճաժամկետ

շարժընթացը,

$\lambda_1, \lambda_2, \lambda_3$ գործակիցներ, որոնք բնութագրում են մոդելի երկարաժամկետ

շարժընթացը,

u_t -ն՝ սխալը կամ մոդելի չբացատրվող մասը:

Առաջին մոդելում դիտարկվել է ՀՀ ՌՏՏ-ի՝ առևտրային բանկերում ներդրած ավանդների, իսկ երկրորդում՝ ՀՀ ՌՏՏ-ի՝ առևտրային բանկերից և վարկային կազմակերպություններից ստացած վարկերի վրա վերը նշված սոցիալ-տնտեսական գործոնների՝ ՄԱԱ-ի (AMW), ՍԳԻ-ի (CPI), ՊԳԳ-ի (ORU) և ՄԱՇ-ի (RTT) ազդեցությունը:

Աղյուսակ 1 Ավանդների ներդրման և վարկավորման վարքագծերի վրա սոցիալ-տնտեսական գործոնների երկարաժամկետ և կարճաժամկետ ազդեցության գնահատականները²

Ավանդների ներդրման վարքագիծ					Վարկավորման վարքագիծ			
Փոփոխական	Գործակից	Ստ.			Գործակից	Ստ.		
		սխալ	t-վիճ.	Հավան.		սխալ	t-վիճ.	Հավան.
Երկարաժամկետ գնահատականներ								
LN_AMW_	0.512	0.183	2.794	0.007	-0.252	0.098	-2.575	0.012
LN_CPI_	-3.660	1.604	-2.283	0.025	1.338	0.811	1.650	0.102
LN_ORU_	-0.299	0.091	-3.282	0.002	-0.680	0.168	-4.044	0.000
LN_RTT_	0.125	0.083	1.504	0.136	0.533	0.168	3.167	0.002
Կարճաժամկետ գնահատականներ								
D(LN_AMW_)	0.079	0.043	1.835	0.070	-0.117	0.019	-6.050	0.000
D(LN_CPI_)	-0.328	0.163	-2.013	0.047	0.178	0.112	1.584	0.117
D(LN_ORU_)	-	-	-	-	-0.017	0.170	-0.102	0.919
D(LN_RTT_)	0.034	0.013	2.634	0.010	0.066	0.008	8.486	0.000
Ճշգրտված R ²	-	-	0.770	-	-	-	0.829	-
Հավան.(F-վիճ.)	-	-	0.000	-	-	-	0.000	-
Դարբին-Ուոթսոն վիճ.	-	-	2.118	-	-	-	1.964	-

² Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից «EViews 10» վիճակագրական համակարգչային ծրագրից արտահանված տվյալների հիման վրա:

Մինչև 12 լագ ունեցող, Ակաիկիի տեղեկատվական չափանիշի (AIC) հիման վրա գնահատված մոդելներից լավագույնը ARDL (1, 12, 10, 0, 8) մոդելն է: Ինչպես ներկայացված է Աղյուսակ 1-ի ձախ հատվածում, բացի ՄԱՇ-ից՝ մնացած բոլոր սոցիալ-տնտեսական գործոնների ազդեցությունը երկարաժամկետում նշանակալի է 5% նշանակալիության մակարդակում: Կարճաժամկետում 5% նշանակալիության մակարդակում նշանակալի են միայն ՍԳԻ-ն և ՄԱՇ-ը, ինչը նշանակում է, որ ՀՀ Ռ-SS ավանդների ներդրման վարքագծի վրա կարճաժամկետում կարելի է ազդեցություն ունենալ, եթե փոփոխվեն այդ գործոնների արժեքները: Կարճաժամկետում ՍԳԻ-ի 1% փոփոխությունը հանգեցնում է -0.328%, իսկ ՄԱՇ-ի 1%-ը՝ 0.034% փոփոխության: Երկարաժամկետում ՀՀ Ռ-SS ավանդների ներդրումը խթանելու համար անհրաժեշտ է պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը կրճատել (նոր աշխատատեղեր ստեղծելու միջոցով), զսպել ինֆլյացիան, փորձել բարձրացնել միջին ամսական անվանական աշխատավարձը, իսկ կարճաժամկետում՝ զսպել ինֆլյացիան և խթանել մանրածախ առևտուրը: Ինֆլյացիայի առաջանցիկ տեմպի առկայությամբ ՀՀ Ռ-SS ավանդները կրճատվում են, ինչն էլ կարող է տնային տնտեսություններին ուղղորդել դեպի գործարարության բնագավառ՝ ներդրումներ կատարելու: Երկրորդ՝ ARDL (6, 1, 4, 12, 10) մոդելում պատկերն այլ է, որի արդյունքներն ամփոփված են Աղյուսակ 1-ի աջ հատվածում: Երկարաժամկետում ՄԱԱ-ի, ՍԳԻ-ի, ՊԳԳ-ի, ՄԱՇ-ի յուրաքանչյուրի 1% փոփոխությունը հանգեցնում է ՀՀ Ռ-SS վարկերի համապատասխանաբար -0.25%, 1.34%, -0.68%, 0.53% փոփոխության: Կարճաժամկետում ՄԱԱ-ի 1% փոփոխությունը հանգեցնում է -0.12%, իսկ ՄԱՇ-ի 1%-ը՝ 0.07% փոփոխության: Մոդելը որակյալ է, ճշգրտված դետերմինացիայի գործակիցը մոտ 83% է:

Համանման եղանակով 2010-2020 թթ.-ի ամսական ժամանակային շարքերի հիման վրա կատարվել է վերլուծություն, որտեղ դիտարկվել է տնային տնտեսությունների՝ ՀՀ դրամով ժամկետային ավանդների միջին տոկոսադրույք (AHTDR_AMD), տնային տնտեսությունների՝ ԱՄՆ դոլարով ժամկետային ավանդների միջին տոկոսադրույք (AHTDR_USD), ԱՄՆ դոլարի փոխարժեք (EXR_USD), պետական միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերություն (MTB_Y), շրջանառությունում կանխիկ դրամ (CUC_AMD) շուկայական գործոնների ազդեցությունը առաջին դեպքում՝ տնային տնտեսություններից ՀՀ դրամով ներգրավված ժամկետային ավանդների

(HTD_AMD), երկրորդ դեպքում՝ տնային տնտեսություններից արտարժույթով ներգրավված ժամկետային ավանդների (HTD_FX) վրա³:

Աղյուսակ 2 << դրամով և արտարժույթով ժամկետային ավանդների վրա շուկայական գործոնների երկարաժամկետ և կարճաժամկետ ազդեցության գնահատականները⁴

<< դրամով ժամկետային ավանդների ներդրման վարքագիծ					Արտարժույթով ժամկետային ավանդների ներդրման վարքագիծ			
Փոփոխական	Ստ.				Ստ.			
	Գործակից	սխալ	t-վիճ.	Հավան.	Գործակից	սխալ	t-վիճ.	Հավան.
Երկարաժամկետ գնահատականներ								
LN_AHTDR_AMD_	0.059	0.063	0.937	0.352	0.123	0.075	1.634	0.107
LN_EXR_USD_	-0.997	0.140	-7.097	0.000	0.463	0.157	2.945	0.004
LN_MTB_Y_	-0.101	0.025	-3.977	0.000	-0.026	0.029	-0.906	0.368
LN_CUC_AMD_	-0.122	0.083	-1.468	0.147	-0.251	0.069	-3.660	0.001
Կարճաժամկետ գնահատականներ								
D(LN_AHTDR_AMD_)	0.086	0.070	1.226	0.224	0.122	0.088	1.394	0.167
D(LN_EXR_USD_)	-0.808	0.145	-5.574	0.000	0.597	0.168	3.548	0.001
D(LN_MTB_Y_)	-0.014	0.020	-0.723	0.472	-0.053	0.026	-2.076	0.041
D(LN_CUC_AMD_)	-0.056	0.090	-0.627	0.533	-0.036	0.050	-0.721	0.473
Ճշգրտված R ²	-	-	0.719	-	-	-	0.540	-
Հավան.(F-վիճ.)	-	-	0.000	-	-	-	0.000	-
Դարբին-Ուոթսոն վիճ.	-	-	1.993	-	-	-	1.963	-

Աղյուսակ 2-ի ձախ մասից տեսանելի է, որ առաջին՝ ARDL (4, 6, 10, 12, 4) մոդելը որակյալ է: ԱՄՆ դոլարի փոխարժեքը 5% նշանակալիության մակարդակում վիճակագրորեն նշանակալի ազդեցություն ունի կարճաժամկետում և երկարաժամկետում, իսկ պետական միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը՝ միայն երկարաժամկետում: Ընդ որում, երկու ցուցանիշների և տնային տնտեսությունների՝ << դրամով ժամկետային ավանդների միջև հակադարձ կապ գոյություն ունի, այսինքն՝ երկարաժամկետում ԱՄՆ դոլարի փոխարժեքի և պետական միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերության մեկական տոկոս փոփոխությունը հանգեցնում է տնային տնտեսությունների՝ << դրամով ժամկետային

³ Տվյալները վերցված են << ԿԲ պաշտոնական կայքէջից.
<https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

⁴ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից «EViews 10» վիճակագրական համակարգչային ծրագրից արտահանված տվյալների հիման վրա:

ավանդների համապատասխանաբար -0.997% և -0.101% փոփոխության, իսկ կարճաժամկետում ԱՄՆ դոլարի փոխարժեքի 1% փոփոխությունը՝ -0.808% փոփոխության: Մոդելի արդյունքներից կարելի է եզրակացնել, որ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի բարձրացման պարագայում բնակչությունը ռիսկային է համարում ՀՀ դրամով և երկարաժամկետ ավանդային ներդրումները: Մյուս կողմից՝ պետական միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերության բարձրացումն ավելի գրավիչ է դարձնում դրանց ձեռքբերումը, ինչն էլ տնային տնտեսություններին դրդում է ներդրումներն ուղղել դեպի պետական պարտատոմսեր: Դիտարկված մյուս գործոնները նշանակալի չեն: Երկրորդ՝ ARDL (7, 2, 12, 8, 12) մոդելի արդյունքներն ամփոփ ներկայացված են Աղյուսակ 2-ի աջ մասում: Երկարաժամկետում նշանակալի ազդեցություն ունեն ԱՄՆ դոլարի փոխարժեքն ու շրջանառությունում կանխիկ դրամը, ընդ որում, առաջինի դեպքում կապը դրական է, իսկ երկրորդի՝ բացասական: Կարճաժամկետում նշանակալի են ԱՄՆ դոլարի փոխարժեքը և պետական միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը, ընդ որում, առաջինի դեպքում կապը դրական է, իսկ երկրորդի դեպքում՝ բացասական: ԱՄՆ դոլարի փոխարժեքը երկարաժամկետում և կարճաժամկետում դրականորեն է ազդում բնակչության՝ ՀՀ դրամով, բացասականորեն՝ արտարժույթով ժամկետային ավանդների վրա, ինչը նշանակում է, որ բնակչությունը ԱՄՆ դոլարի փոխարժեքի աճի պայմաններում ձգտում է նվազեցնել ՀՀ դրամով ավանդների ծավալը՝ ավելացնելով արտարժույթով ավանդային ներդրումները:

Այսպիսով՝ ատենախոսության այս բաժնում գնահատվել են բնակչության ավանդների ներդրման ու վարկավորման վարքագծերի վրա սոցիալ-տնտեսական և շուկայական գործոնների ազդեցության չափերն ու ուղղությունները:

Ատենախոսության երրորդ՝ **«ՀՀ բնակչության ֆինանսական վարքագծի բարելավման ուղիները»** գլխում կատարվել են ՀՀ բնակչության ֆինանսական վարքագծի, ֆինանսական գրագիտության, ֆինանսական սթրեսի, ֆինանսական բավարարվածության ուսումնասիրություն և գնահատում, քննարկվել են դրանց առնչվող հիմնախնդիրներն ու գնահատվել դրանց միջև կապը, առաջարկվել ֆինանսական վարքագծի բարելավման ուղիներ:

ՀՀ բնակչության շրջանում անցկացված հարցման միջոցով (ընտրանքի չափը՝ N=515. ներկայացուցչական է, քանի որ մեծ է 385-ից⁵) հավաքագրվել են տվյալներ: Հարցաթերթիկները պատասխանողներին տրամադրվել են թղթային և էլեկտրոնային եղանակներով: Ընտրանքի ձևավորման գործընթացն իրականացվել է 2 փուլով. առաջին փուլում ընտրվել են տնային տնտեսությունները, իսկ երկրորդ փուլում՝ տնային տնտեսության ներսում հարցման մասնակիցը^{6,7}: Հարցումն անցկացնողը յուրաքանչյուր տնային տնտեսությունում պատասխանողին ընտրելիս առաջնորդվել է Քիշի աղյուսակով, որպեսզի պատասխանողների ընտրությունը անշեղ ստացվի⁸: Հավաքագրված տվյալների հիման վրա կատարված որակական վերլուծությունը ցույց է տվել, որ հատկապես բարձրագույն կրթություն ստացած և տնտեսագիտական մասնագիտություն ունեցող պատասխանողների ֆինանսական վարքագիծն է ավելի դրական: Նշվածը տեղի ունի նաև ֆինանսական գրագիտության դեպքում: Վերջինը, բացի այդ, ավելի բարձր է արական սեռի ներկայացուցիչների, զբաղվածների և համեմատաբար բարձր եկամուտ ունեցողների շրջանում: Ֆինանսական սթրեսը համեմատաբար բարձր է ամուսնացածների դեպքում, մինչդեռ համեմատաբար ցածր՝ տնտեսագիտական մասնագիտություն ունեցողների շրջանում: Տղամարդկանց ֆինանսական բավարարվածությունն ավելի բարձր է, իսկ ամուսնացածներինը՝ համեմատաբար ցածր: Բարձր ֆինանսական բավարարվածություն ունեցող պատասխանողների շարքում գերակշռում են բարձրագույն կրթություն ստացած, տնտեսագետ, զբաղված կամ միջինից բարձր եկամուտ ունեցող անձինք: Քանակական վերլուծությունից բացահայտվել է, որ ֆինանսական սթրեսի և ֆինանսական բավարարվածության միջև կապը բացասական է, այսինքն՝ ֆինանսական սթրեսի ավելացմանը զուգընթաց նվազում է ֆինանսական բավարարվածությունը, իսկ ֆինանսական բավարարվածության, ֆինանսական գրագիտության բարձրացմանը

⁵ Հաշվարկը կատարվել է Ավստրալիայի վիճակագրական բյուրոյի պաշտոնական կայքէջում տեղադրված հաշվիչի միջոցով.

<https://www.abs.gov.au/websitedbs/d3310114.nsf/home/sample+size+calculator>:

⁶ Economic Commission for Europe Conference of European Statisticians. (2011). In-Depth Review of Household Survey Methods in Different Countries. Geneva, pp. 4-6.


⁷ Nemeth, R. (2001). Respondent Selection Within the Household-A Modification of the Kish Grid., (pp. 1-14).

⁸ Kish, L. (1949). A Procedure for Objective Respondent Selection within a Household. Journal of the American Sociological Association, 44, 380-387.

զուգընթաց դրական ֆինանսական վարքագիծ է դրսևորվում: Արդյունքներն ամփոփ ներկայացված են Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3 Ֆինանսական վարքագծի և դրա վրա ազդող գործոնների ռեգրեսիայի կշիռները (չստանդարտացված) և ստանդարտ սխալը⁹

Ազդեցություն		Կշիռ	Ստանդարտ սխալ	Կրիտիկական հարաբերակցություն	Վարկած
Ֆինանսական բավարարվածություն	<- Ֆինանսական սթրես	-0.591	0.078	-7.626	H ₄ (-)
Ֆինանսական վարքագիծ	<- Ֆինանսական բավարարվածություն	0.464	0.113	4.113	H ₃ (+)
Ֆինանսական վարքագիծ	<- Ֆինանսական գրագիտություն	0.295	0.060	4.887	H ₂ (+)



Գծապատկեր 1 Կառուցվածքային մոդելի (SEM) արդյունքները (կշիռները ստանդարտացված են)¹⁰

⁹ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից, սվյալներն արտահանվել են «IBM SPSS AMOS 26» համակարգչային ծրագրից:

¹⁰ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից, արտահանվել է «IBM SPSS AMOS 26» համակարգչային ծրագրից:

Գծապատկեր 1-ից տեսանելի է, որ բնակչության ֆինանսական վարքագծի վարիացիան 34%-ով բացատրվում է դիտարկված գործոններով, իսկ ֆինանսական բավարարվածության վարիացիան՝ 55%-ով: Հարցմամբ հավաքագրված տվյալների հիման վրա կատարված գնահատման արդյունքում պարզ է դարձել, որ բնակչության ֆինանսական վարքագիծը, ֆինանսական գրագիտությունը և ֆինանսական բավարարվածությունը միջին մակարդակի են, մինչդեռ ֆինանսական սթրեսը՝ ցածր:

Վերը նշված ուսումնասիրությունների արդյունքում նախանշվել են ֆինանսական վարքագծի բարելավման ուղղություններ և մոտեցումներ սոցիալ-տնտեսական, գիտակրթական, ֆինանսական-ներդրումային ոլորտներում:

Սոցիալ-տնտեսական ոլորտում կարևորվում է պետության կողմից տնտեսական ակտիվության և զբաղվածության խթանման քաղաքականությունը՝ կրճատելով գործազրկության և աղքատության մակարդակը: Կայուն գների ապահովման միջոցով հնարավոր է ապահովել ֆինանսական վարքագծի արդյունավետությունը կամ բարելավել այն:

Կրթական ոլորտում կարևորվում է բնակչության ֆինանսական գրագիտության բարձրացման ապահովումը, որտեղ էական է դպրոցների, համալսարանների, ֆինանսական ինստիտուտների դերը: Մասնավորապես վարքագծային ֆինանսների մասնագետների պատրաստումը և ուսումնական ծրագրերում վարքագծային ֆինանսների վերաբերյալ դասընթացների ներդրումը, ուսումնական ձեռնարկների և ուղեցույցների հրատարակումը կարող են ֆինանսական գրագիտության բարձրացման միջոցով ֆինանսական վարքագծի բարելավման դրական սկիզբ և ազդակ լինել: ՀՀ նյութերով ֆինանսական վարքագծի վերաբերյալ հետազոտությունների սակավությունն առանցքային խնդիրներից է, որի լուծմամբ հնարավոր է ոչ միայն պարզել բնակչության կամ տնային տնտեսությունների ֆինանսական վարքագիծը ներկայում, այլև բացահայտել դրա բարելավման հիմնավոր ուղիներ:

Ֆինանսական-ներդրումային ոլորտում առաջարկվող մոտեցումը վերաբերում է տնային տնտեսությունների մակարդակով իրականացվող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ ֆինանսական վերահսկողությանը, որի իրականացումը դյուրին է թվային կրիչների կիրառման պարագայում: Ֆինանսական վերահսկողության միջոցով

հնարավոր է հասնել ֆինանսական պլանի ճշգրտման, ֆինանսական պատասխանատվության բարձրացման և ֆինանսական վարքագծի բարելավման:

Այսպիսով՝ ՀՀ բնակչության շրջանում անցկացված հարցման տվյալների հիման վրա կատարվել են որակական և քանակական վերլուծություններ, գնահատվել ֆինանսական վարքագծի վրա ազդող վարքագծային գործոնների ազդեցությունը, կապը, առաջադրվել ֆինանսական վարքագծի բարելավման մոտեցումներ:

Եզրակացություններում վարքագծային ֆինանսների տեսության և ՀՀ-ում բնակչության ֆինանսական վարքագծի և ներդրումային որոշումների կայացման հիմնախնդիրների ուսումնասիրությունը թույլ է տվել կատարել հետևյալ եզրահանգումները.

1. ՀՀ բնակչության ավանդների ներդրման վարքագծի վերաբերյալ.

1.1. կատարված վերլուծության միջոցով ցույց է տրվել, որ երկարաժամկետում ՀՀ միջին ամսական անվանական աշխատավարձը, սպառողական գների ինդեքսը և պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը, իսկ կարճաժամկետում սպառողական գների ինդեքսը և մանրածախ առևտրի շրջանառությունը նշանակալիորեն ազդում են ՀՀ ռեզիդենտ տնային տնտեսությունների ավանդների ներդրման (խնայողության) վարքագծի վրա, ընդ որում, միջին ամսական անվանական աշխատավարձը և մանրածախ առևտրի շրջանառությունը՝ դրականորեն (կապն ուղիղ է), իսկ սպառողական գների ինդեքսն ու պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը՝ բացասականորեն (կապը հակադարձ է):

1.2. Դիտարկված շուկայական գործոններից տնային տնտեսությունների՝ ՀՀ դրամով ժամկետային ավանդների վրա երկարաժամկետում նշանակալիորեն ազդում են ԱՄՆ դոլարի փոխարժեքը և պետական միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը, կարճաժամկետում՝ ԱՄՆ դոլարի փոխարժեքը, ընդ որում, բոլորի դեպքում էլ կապը բացասական է, իսկ արտարժույթով ժամկետային ավանդների վրա երկարաժամկետում՝ ԱՄՆ դոլարի փոխարժեքը (կապը դրական է) և շրջանառությունում կանխիկ դրամը (կապը բացասական է), կարճաժամկետում՝ ԱՄՆ դոլարի փոխարժեքը (կապը դրական է) և պետական միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը (կապը բացասական է):

2. ՀՀ բնակչության վարկավորման վարքագծի վերաբերյալ.

2.1. կատարված վերլուծության միջոցով ցույց է տրվել, որ երկարաժամկետում ՀՀ միջին ամսական անվանական աշխատավարձը, պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը, մանրածախ առևտրի շրջանառությունը, իսկ կարճաժամկետում միջին ամսական անվանական աշխատավարձը և մանրածախ առևտրի շրջանառությունը նշանակալիորեն ազդում են ՀՀ ռեզիդենտ տնային տնտեսությունների վարկավորման վարքագծի վրա, ընդ որում, մանրածախ առևտրի շրջանառությունը՝ դրականորեն (կապն ուղիղ է), իսկ միջին ամսական անվանական աշխատավարձը, պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը՝ բացասականորեն (կապը հակադարձ է):

2.2. Ուսումնասիրվող ժամանակահատվածում դիտարկված շուկայական գործոնները նշանակալի ազդեցություն չեն ունեցել բնակչության վարկավորման վարքագծի վրա:

3. ՀՀ բնակչության ֆինանսական վարքագծի և դրա վրա ազդող վարքագծային գործոնների վերաբերյալ.

3.1. ՀՀ-ում իրականացված հարցման տվյալների հիման վրա (N=511) իրականացվել են որակական և քանակական վերլուծություններ. վերջինի միջոցով ցույց է տրվել, որ ֆինանսական սթրեսը՝ ֆինանսական բավարարվածության միջոցով (միջնորդավորված), իսկ ֆինանսական գրագիտությունը և ֆինանսական բավարարվածությունն ուղղակիորեն նշանակալի ազդեցություն են ունենում ֆինանսական վարքագծի վրա, ընդ որում, ֆինանսական սթրեսի և ֆինանսական բավարարվածության միջև կապը հակադարձ է կամ բացասական, իսկ ֆինանսական բավարարվածության, ֆինանսական գրագիտության և ֆինանսական վարքագծի միջև՝ ուղիղ կամ դրական:

4. ՀՀ բնակչության ֆինանսական վարքագծի և ներդրումային որոշումների կայացման հիմնախնդիրների ու վարքագծի բարելավման ուղիների վերաբերյալ.

4.1. իրականացված հետազոտության և վերլուծության արդյունքում բացահայտվել է, որ ՀՀ-ում բնակչության ֆինանսական վարքագիծը պայմանավորված է մի շարք հիմնախնդիրներով, ինչպիսիք են գների անկայունությունը, աղքատության, գործազրկության՝ բարձր, եկամուտների՝ ցածր, ֆինանսական գրագիտության՝

ոչ բավարար մակարդակները և բնակչության ֆինանսական վարքագծի վերաբերյալ գիտական հետազոտությունների սակավությունը:

4.2. Վարքագծային ֆինանսների բարելավման նպատակով պետության, կազմակերպությունների և բնակչության կողմից սոցիալ-տնտեսական, գիտակրթական, ֆինանսական-ներդրումային ոլորտներում իրականացվելիք մոտեցումներ են մշակվել:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Գրիգորյան, Է. Մ., Պետրոսյան, Ս. Մ. (2020). Վարքագծային ֆինանսները՝ ֆինանսների, հոգեբանության և հասարակագիտության խաչմերուկում. Այլընտրանք եռամսյա գիտական հանդես(1), էջեր 408-412,
2. Գրիգորյան, Է. Մ., Պետրոսյան, Ս. Մ. (2020). Վարքագծային ֆինանսների և ֆինանսների ավանդական տեսության համեմատական վերլուծությունը. Տարածաշրջան և աշխարհ գիտավերլուծական հանդես, XI(2), էջեր 175-178,
3. Hakobyan, A. A., & Grigoryan, E. M. (2021). Behavioral Finance and Traditional Finance: Theory and Analysis in Practice. Finance and Accounting, 4(1), էջեր 56-69,
4. Գրիգորյան, Է. Մ. (2021). ՀՀ ռեզիդենտ տնային տնտեսությունների վարկավորման վարքագծի վրա ազդող սոցիալ-տնտեսական գործոնների գնահատում. Պատմություն և քաղաքականություն գիտական հանդես, 15(4), էջեր 153-161,
5. Grigoryan, E. M. (2021). Impact of Socioeconomic Factors on the Saving Behavior of the RA Resident Households. Messenger of ASUE, 2021(5), էջեր 22-34. doi:10.52174/1829-0280_2021_5_22,
6. Հակոբյան, Ա. Ա., Գրիգորյան, Է. Մ. (2022). ՀՀ բնակչության ֆինանսական վարքագծի վրա ազդող գործոնների փոխկապակցվածության գնահատումը. Տարածաշրջան և աշխարհ գիտավերլուծական հանդես, XIII(2), էջեր 150-159:

ГРИГОРЯН ЭРИК МАИСОВИЧ

**ПРОБЛЕМЫ ФИНАНСОВОГО ПОВЕДЕНИЯ И ПРИНЯТИЯ ИНВЕСТИЦИОННЫХ
РЕШЕНИЙ НАСЕЛЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 – “Финансы, бухгалтерский учет”.

Защита диссертации состоится 7-го июля 2022 г., в 14:00 на заседании специализированного совета 014 ВАК РА, действующего в Армянском государственном экономическом университете.

Адрес: РА, г. Ереван, 0025, ул. М. Налбандяна, 128.

РЕЗЮМЕ

Актуальность темы исследования: Поведенческие финансы - это теория, имеющая междисциплинарные корни. Как отдельная область финансов, она включает в себя исследования финансового поведения людей и принятия ими инвестиционных решений. В Республике Армения недостаточно исследований по этой теме, поэтому необходимы, как теоретические, так и эмпирические исследования. Эмпирические исследования могут способствовать повышению финансовой грамотности, финансового поведения, оценке и управлению возникающими рисками и возможностями, благодаря чему люди могут более разумно распоряжаться своими финансовыми ресурсами, что в свою очередь, может повлиять на всю экономику. Исследование особенно актуально в свете аномалий и неизбежных обстоятельств, происходящих в последние годы, которые порождают ожидания (в основном негативные) у людей, направляя их к предвзятым инвестиционным решениям и нерациональному финансовому поведению.

Цель исследования и задачи: Цель диссертации - выявить проблемы, связанные с финансовым поведением и принятием инвестиционных решений населением в РА, на основе оценки влияющих факторов, связей и закономерностей разработать и предложить научно обоснованные подходы к улучшению финансового поведения. Для достижения этой цели в диссертации поставлены следующие задачи:

- раскрыть сущность поведенческих финансов, взаимосвязь с традиционными финансами;
- собрать и обобщить статистические показатели и другие данные о финансовом поведении и принятии инвестиционных решений населением в РА;
- оценить влияние социально-экономических и рыночных факторов на сберегательное поведение;
- оценить влияние социально-экономических и рыночных факторов на кредитное поведение;
- оценить влияние поведенческих или психологических факторов на финансовое поведение;
- выявить проблемы, касающиеся финансового поведения населения в РА, предложить подходы, основанные на исследованиях к улучшению финансовых и инвестиционных решений.

Научная новизна исследования: Научная новизна исследования заключается в разработке усовершенствованных подходов, основанных на оценке финансового поведения населения и их детерминантов. В частности:

- посредством анализа поведения в отношении инвестиционных вкладов (сбережений), было выяснено и оценено сберегательное поведение домохозяйств и его детерминантов в РА, включая среднемесячную номинальную заработную плату, индекс потребительских цен, официально зарегистрированных безработных, обменный курс доллара США, рыночную процентную ставку, были определены связи между ними и их направления;
- посредством анализа кредитного поведения, были выяснены и оценены социально-экономические и рыночные факторы, влияющие на кредитное поведение домашних хозяйств РА, которые были наблюдаемы в случае вкладов, выявлены связи между ними и их направления;
- было оценено влияние финансового стресса на финансовую удовлетворенность, финансовой грамотности, финансового стресса и финансовой удовлетворенности на финансовое поведение населения РА, были определены связи между ними и их направления;
- изучена и выявлена связь между финансовым поведением и принятием инвестиционных решений населением РА и различными социально-экономическими проблемами, предложены подходы, которые могут способствовать инвестиционному и финансовому поведению в социально-экономической, научно-образовательной, финансово-инвестиционной сферах.

GRIGORYAN ERIK MAYIS
FINANCIAL BEHAVIOR AND INVESTMENT DECISION-MAKING ISSUES OF THE
POPULATION IN THE REPUBLIC OF ARMENIA

Abstract of the thesis for receiving the degree of PhD in Economics in the specialty 08.00.03 – “Finance, Accounting”.

The defense of the thesis will take place on July 7, 2022, at 14:00 at the session of the 014 Specialized Council in Economics of SCC RA acting at Armenian State University of Economics.

Address: 128 Nalbandyan St., 0025, Yerevan, Armenia.

ABSTRACT

Relevance of the research topic: Behavioral finance is a theory having interdisciplinary roots. As a distinct field of finance, it includes studies on financial behavior and investment decision-making of people. Obviously, there exists a lack of research on financial behavior issues of people in the Republic of Armenia, therefore both theoretical and empirical studies are needed. The latter can foster the improvement of financial literacy, financial behavior, the assessment and management of arising risks and opportunities, due to which people can manage their financial resources more prudently, which, in its turn, may impact the whole economy. The research is relevant especially under the light of anomalies and force majeure occurring during recent years that generate expectations (mostly negative) among people directing them towards biased investment decisions and irrational financial behavior.

Purpose of the research and tasks: The purpose of the dissertation is to reveal issues related to financial behavior and investment decision-making of the population in the RA, on the basis of assessment of the affecting factors, relationships and patterns cultivate and suggest scientifically approved approaches to improve financial behavior. To attain this goal, the following tasks are proposed in the thesis:

- to reveal the essence of behavioral finance, the relationship between the latter and traditional finance,

- to compile and summarize statistical indicators and other data on financial behavior and investment decision-making of the population in the RA,
- to estimate the impact of socioeconomic and market factors on deposit investment (saving) behavior,
- to estimate the impact of socioeconomic and market factors on credit behavior,
- to estimate the impact of behavioral or psychological factors on financial behavior,
- to reveal issues concerning financial behavior of population in the RA, suggest research-based approaches toward improvement of financial and investment decisions.

Scientific novelty of the study: The scientific novelty of the study is the development of improvement approaches based on estimation of financial behavior of the population and its determinants. In particular:

- by means of deposit investment (saving) behavior analysis household saving behavior and its determinants in the RA, including average monthly nominal wage, consumer price index, officially registered unemployed, USD exchange rate, market interest rate, were clarified and estimated, the relationship among them and directions thereof were pinpointed,
- by means of credit behavior analysis the factors observed in the case of deposits and affecting household credit behavior were clarified and estimated, the relationship among them and directions thereof were pinpointed,
- the impacts of financial stress on financial satisfaction, financial stress, financial literacy and financial satisfaction on financial behavior of the population in the RA were estimated, the relationship among them and directions thereof were pinpointed,
- the relationship and its directions between financial behavior and investment decision-making of the population in the RA and various socioeconomic issues were studied and revealed, approaches were provided so that could contribute investment and financial behavior in socioeconomic, science-educational, financial-investment spheres.

